ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 4-7

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» հունվարի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), ի դեմս նախագահ Աշոտ Սաղյանի, որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը»** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)

(ծրագրի անվանումը)

իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 256 830 300 (երկու հարյուր հիսունվեց միլիոն ութ հարյուր երեսուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 256 830 300 (երկու հարյուր հիսունվեց միլիոն ութ հարյուր երեսուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ

իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
ՈԱԿ
ք. Երևան, Բաղրամյան պող., 24
Հ/հ 900011024115,
ՀՎՀՀ 00005673
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝

(ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24ա
Հ/հ 900018005422,
ՀՎՀՀ 00007498
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրեն՝

(ստորագրություն)
ԽԱՉԱՏՈՒՐ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ԽԱՉԱՏՈՒՐ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 1
«27» հունվարի 2022թ.
N 2-7 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Աշոտ Սաղյանի և ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը, վկայում ենք, որ
(անուն, ազգանուն)

Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» հունվարի 2022 թ.
N 2-7 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 256 830 300 (երկու հարյուր հիսունվեց միլիոն ութ հարյուր երեսուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:
(թվերով և բառերով)

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ՊՈԱԿ
Նախագահ՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
Աշոտ Սաղյան	Խաչատուր Մելիքսեթյան
(անուն, ազգանուն)	*(անուն, ազգանուն)*

Հավելված N 2
«27» հունվարի 2022թ.
N 2-7 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի

(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Հրաբխասեյսմիկ ակտիվության, հրաբխային վտանգի, երկրաջերմային էներգիայի աղբյուրների բացահայտում:

ՀՀ տարածքի մակերևույթային խզվածքավորման, հողերի ջրիկացման, լանջային գործընթացների բացահայտում:

քաղաքների, հատուկ նշանակության տարածքների (ՀԷԿ, ԱԷԿ, ջրամբարներ, պոչամբարներ) սեյսմիկ վտանգի և ռիսկի հավանակային և դետերմինիստիկ գնահատում:

ՀՀ և հարակից տարածքների սեյսմոլոգիական իրավիճակի բացահայտում: Հայաստանի տարածքի Երկրակեղևի կառուցվածքի վերհանում:

Երկրաֆիզիկական մեթոդներով ծածկված հնագիտական տեղավայրերի առավել բարենպաստ հատվածների հայտնաբերում:

Առանձին տեղամասերում մագմատիկ, մետամորֆային ապարների նյութական կազմերի, նրանց փոխհարաբերությունների, հասակի ու երկրադինամիկ, ծագումնաբանության հարցերի վերհանում:

Պալեոմիջավայրի լիթոդինամիկ և էկոլոգիական պայմանների վերականգնում:

Նոր ուսումնասիրվող հանքային դաշտերի տարածքներում, ինչպես նաև գործող հանքավայրերի կողաթևերում նոր հանքային մարմիններ հայտնաբերում:

Տարբեր ծագում ունեցող ջրերի կազմերի ձևավորման առանձնահատկությունների պարզաբանում, նրանց վրա բնական և անտրոպոգեն ազդեցությունների և կազմի փոփոխությունների աստիճանի գնահատում:

Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի գեոէկոլոգիական վիճակի ու փոփոխությունների միտումների, անտրոպոգեն գործոնների՝ էկոհամակարգային ծառայությունների և ջրի որակի վրա ազդեցությունների գնահատում:

Երկրաբանական տարածական արխիվային տեղեկատվության հասանելիության ապահովում՝ Երկրի մասին գիտությունների խնդիրների լուծման նպատակով կիրառելու համար:

Սիլիցիում պարունակող ապարների թափոնների ջերմային վերամշակմամբ շինանյութերի ստացման մեթոդի մշակում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Հրաբխային ապարների պետրոլոգա-երկրաքիմիական և հրաբխատեկտոնական ուսումնասիրություններ:

Հրաբուխների և հրաբխային դաշտերի սեյսմիկ տոմոգրաֆիա, երկրակեղևի անհամասեռությունների և հրաբխասեյսմիկ ակտիվության ուսումնասիրություններ:

Հրաբխային վտանգավոր ժայթքումների թվային մոդելավորում:

Երկրաջերմերի իզոտոպային ուսումնասիրություններ:

Երկրակեղևում ընթացող պրոցեսներով պայմանավորված երկրակառուցվածքային տարրերի՝ ժամանակի մեջ զարգացումների և ժամանակակից երկրադինամիկ ակտիվության ուսումնասիրություններ:

Ակտիվ կառույցների առանձնացում և խոշոր մասշտաբում երկրաչափության առանձնահատկությունների ուսումնասիրություններ:

Խզվածքի գոտիներում, մասնավորապես ջրածածկ հատվածներում (Սևանա լիճ) գազային արտանետումների օրինաչափությունների և նրանց խզվածքների հետ առնչությունների ուսումնասիրություններ:

ՀՀ տարածքի երկրաշարժերի օջախային գոտիների սեյսմիկ վտանգի երկրաբանական հետազոտում:

Երկրաբանական մեթոդներով ՀՀ տարածքի սեյսմատեկտոնական դեֆորմացիայի մեծությունների, երկրաշարժերի օջախների դինամիկական պարամետրերի որոշում և տվյալների բազայի թարմացում:

Ակտիվ խզվածքների, հատկապես չհետազոտված սեգմենտների համար ակտիվության բաղադրիչների, երկրաչափական առանձնահատկությունների, հնարավոր ակտիվացման հետքերի ուսումնասիրություններ:

Վտանգավոր երկրաբանական պրոցեսների, լանջային (սողանքների, փլուզումների), հողերի ջրիկացման և այլ վտանգավոր երկրաբանական երևույթների և փոխհարուցման, փոխկապակցությունների ուսումնասիրություններ:

Երկրաբանական վտանգավոր երևույթների ինժիներաերկրաբանական հետազոտություն, քարտեզագրում:

Տարբեր կատալոգներում ընդգրկված պատմական և նախապատմական երկրաշարժերի մասին տվյալների, նրանց ուժգնության, մագնիտուդների, տեղադրվածության, հետևանքների հավաստիության գնահատում և երկրաշարժերի կատալոգի թարմացում:

Սեյսմիկ ցանցի ընդլայնում, նոր սեյսմիկ կայանների տեղադրում/արդիականացում (սեյսմոլոգիական ցանցի անխափան աշխատանքի ապահովում), ժամանակակից կայաններից սեյսմոլոգիական տվյալների գրանցում: Սեյսմիկ տվյալների շտեմարանների լրացում և ստեղծում, մշակում և վերլուծություն: Երկրաշարժերի հիմնական պարամետրերի որոշում:

Հորատանցքային սեյսմոմետրերի տեղային մոդելների առաջարկում:

Սեյսմիկ տոմոգրաֆիայի կիրառմամբ Հայաստանի տարածքի Երկրակեղևի կառուցվածքի ուսումնասիրություններ: ՀՀ տարածքի համար նոր եռաչափ 3D արագությունների մոդելի կազմում և ճշտում:

Սեյսմածին գոտիների տվյալների շտեմարանների արդիականացում, սեյսմիկ ալիքների մարման մոդելների ընտրություն ՀՀ և հարակից տարածքների համար:

Լայնական ալիքների տարածման միջին արագությունների (VS30 (մ/վ)) բաշխման քարտեզների ստեղծում:

Մագմատիկ, մետամորֆային ապարների պետրոլոգիական կազմի, ֆիզիկա- և երկրաքիմիական հատկանիշների ուսումնասիրություններ:

Վերին էոցեն-օլիգոցենի և պլիոցեն-չորրորդական նստվածքային ապարների լիթոֆացիալ անալիզ և պետրոգրաֆիական ուսումնասիրություններ, երկրաքիմիական (XRF, իզոտոպային) տվյալների անալիզ:

Հնէաբանական (բրախիոպոդներ, կոնոդոնտներ, շնաձկներ, ֆորամինիֆերներ, դիատոմներ, գաստրոպոդներ), պալինոլոգիական (ծաղկափոշի, սպորներ) ուսումնասիրություններ:

Առանձին տեղամասերում, հանքավայրերի կողաթներում, հանքային դաշտերում հանքայնացման երկրաքիմիական եզրապսակների, միներալային կազմի, նրանց ծագումնաբանության, հանքային մարմինների փոխհարաբերությունների, հասակի ու ձևավորման հարցերի ուսումնասիրություններ:

Տարբեր ծագումնաբանություն ունեցող ջրերի կազմի ձևավորման առանձնահատկությունների, կազմի փոփոխությունների որոշման աստիճանի և նրանց ազդեցությունների գնահատում, ջրի կազմին/որակին ներկայացվող առողջապահական պահանջների բավարարման պայմանների որոշում և դրանց գիտական հիմնավորում: Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման պլանավորման արդյունավետ մեթոդների և մոդելների մշակում:

ՀՀ տարածքի բարձր լեռնային գոտիներում ձյան շերտում ջրի պաշարի գնահատման մոդելի մշակման աշխատանքներ: Մասնավորապես, արբանյակային պատկերներից ստացված ձնածածկույթի տարածական տվյալների և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի տվյալների միջև կապերի դուրս բերում:

Քարտեզագրական բարձր արժեք ունեցող երկրաբանական տարածական տեղեկատվության ինտեգրում այլ տարածական տվյալների հետ վեբ-ԱՏՀ համակարգում՝ ստեղծելով Երկրի մասին գիտությունների խնդիրների լուծման նոր հնարավորություններ:

Երկրաբանական ֆոնդի սկանավորված երկրաբանական քարտեզների գեոկապակցում և ներմուծում վեբ-ԱՏՀ համակարգ:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Հրաբխագիտությունը ունի հիմնարար և կիրառական նշանակություն, առավել ևս երբ ՀՀ և հարակից Վրաստանի, Թուրքիայի տարածքները հանդիսանում են մոնոգեն հրաբխականության առավել խիտ կլաստերներից մեկը Երկրագնդի վրա: Հրաբուխների դասավորվածությունը և տարածական բաշխվածության խտությունը կարևոր տեղեկատվություն են կրում տեկտոնական լարվածային ռեժիմի ուղղությունների և ժամանակի մեջ տեկտոնական ռեժիմի փոփոխությունների մասին: Կազմավորվելով 60-40կմ խորությունների վրա, տարածաշրջանի մանթիայի կառուցվածքի մասին կրում են կարևոր տեղեկատվություն: Հրաբխականության ուսումնասիրություններն ունեն նաև կարևոր կիրառական նշանակություն, կապված մի շարք հրաբխային ծագման ոչ մետաղական օգտակար հանածոների ուսումնասիրությունների հետ: Միջդիսցիպլինար և միջլաբորատոր հետազոտությունների մի առանձին ուղղություն է ՀՀ տարածքի երկրաջերմային պոտենցիալի ուսումնասիրությունը: Երկրաջերմային էներգիան համարվում է վերականգնվող էներգիայի աղբյուր, իսկ երկրաջերմային էներգետիկայի զարգացումը կնպաստի ՀՀ էներգետիկ անվտանգությանը:

Վտանգավոր երկրաբանական երևույթների ուսումնասիրություններն ունեն հավասարապես նաև կիրառական նշանակություն, քանի որ ստացված տվյալները հանդիսանում են բնական վտանգի գնահատման համար կարևոր բաղադրիչ, որի հիմքի վրա կառուցվում են տնտեսական զարգացման ծրագրեր (քաղաքաշինական, տրանսպորտային, էներգետիկ և այլն): Կիրառական նշանակության են նաև

սեյսմաբանության, դրան առնչվող սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման հարցերի պարզաբանումները:

Առաջադրված խնդիրները կառուցվածքաերկրաբանական մասով ունեն կարևոր կիրառական նշանակություն՝ օգտակար հանածոների տեղադրվածության տեսանկյունից:

Կիրառական բաղկացուցիչ ունի նաև պալեոմիջավայրի վերականգնումը, դա ապագա մարտահրավերների կանխատեսման, հնարավոր անցանկալի գործընթացների կանխման մոտեցումների մշակումն է:

Հիդրոերկրաբանական, այդ թվում՝ հիդրոերկրաքիմիական հետազոտություններն ունեն կարևորագույն կիրառական նշանակություն աշխարհի բոլոր երկրներում, քանի որ դրանք տալիս են երկրի տնտեսության զարգացման համար ամենաանհրաժեշտ տեղեկությունները՝ ունենալով գիտական հիմնավորումներ:

Կիրառական կարևոր նշանակություն ունեն նաև սիլիցիտային ապարների թափոնների վերամշակման մեթոդի ստացումը՝ շինանյութերի արտադրության մեջ:

Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդված, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում, գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում:

Ակնկալվող արդյունք	միավոր	քանակ
ԱԳ(ազդեցության գործակից) ունեցող պարբերականներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների	հատ	10
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներ	հատ	5
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներ	հատ	15
Այլ պարբերականներ/հոդված ժողովածուի մեջ	հատ	5
Գիտաժողովի նյութեր	հատ	20
Արտոնագրեր		
Գրքեր, մենագրություններ	հատ	1
Այլ արդյունք (նշել յուրաքանչյուրի համար առանձին)		

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Խաչատուր Մելիքսեթյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Խաչատուր Մելիքսեթյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 3

«27» հունվարի 2022թ.
N 7-7 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի

(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվո գումարը (հազար դրա
1.	Գրականության և ֆոնդային նյութերի մշակում	Ուսումնասիրվող նյութերի և օբյեկտների վերաբերյալ արխիվային տվյալների հավաքում	Ուսումնասիրման ենթակա նյութերի և օբյեկտների վերաբերյալ գրադարանային և արխիվային նյութերի հավաքում և մշակում	Տվյալների բազայի ստեղծում. նախկինում ստացված տվյալների համեմատություն նորերի հետ, կորելյացիա	01-03.2022թ	**51 366.1**
2.	Տեղային աշխատանքներ	Տեղային երկրաբանական աշխատանքներ, տեղային սարքավորումների տեղադրում, սպասարկում, պահպանություն	Ապարների, հանքանյութերի, ջրերի, հողերի նմուշարկում, երկրաբանական երթուղիներ, կտրվածքների կազմում, քարտեզների ճշգրտում	Անհրաժեշտ նյութի հավաքում, եղած տվյալների ճշգրտում, կտրվածքների և մերկացումների գնահատում, դաշտային սարքավորումների տվյալների հավաքագրում	04-06.2022թ	**64 207.6**
3.	Անալիտիկ հետազոտություն-ներ	Հավաքված նյութի նյութական կազմի որոշումներ, լաբ. սարքավորումների սպասարկում, Մեթոդների մշակում	Հիմնական էլեմենտների կազմի, սպեկտրոմետրիկ, հիդրոքիմիական և այլ հետազոտություններ, շլիֆների պատրաստում	Հետազոտվող նյութերի կազմերի պարզաբանում, համեմատական անալիզ,	07-09.2022թ	**64 207.6**
4.	Ստացված նյութի մշակում, Հոդվածներ, տարեկան հաշվետվություն	Տվյալների ստուգում, դասակարգում, մուտքագրում համակարգիչ, ստացված արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն. հանրայնացում	Համակարգչային աշխատանքներ, տվյալների նախնական խմբավորում և դասակարգում, Ստացված արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն	Տվյալների բազաների, մոդելների կազմման և նախնական ստուգման աշխատանքներ, զեկուցումներ, հոդվածներ, տարեկան հաշվետվություն, գիտահանրամատչելի լուսաբանում	10-12.2022թ	**77 049.0**
Ընդամենը						**256 830.3**

Կազմակերպության
տնօրեն՝ _____ (Խաչատուր Մելիքսեթյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Խաչատուր Մելիքսեթյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամյակային փուլերով*

Հավելված N 4.1
«27» հունվարի 2022 թ.
N 2-7 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	13 450.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*4 550.0*
	գազի ծառայություն	*5 440.0*
	ջրամատակարարման ծառայություն	*500.0*
	Կապի և համակարգչային ծառայություն	*2 610.0*
	Աղբահանություն	*350.0*
2	Գույք	900.0
3	Սարքեր և սարքավորումներ	3 000.0
4	Նյութեր	2 250.0
5	Գործուղումներ	3 000.0
6	Հրատարակման ծախսեր	100.0
7	Շենքի պահպանություն	900.0
8	Տրանսպորտային և այլ ՀՄ նորոգում /քարթ	750.0
9	Այլ մասնագիտական ծառայություններ	1 535.3
Ընդամենը		**25 885.3**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Խաչատուր Մելիքսեթյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Մարգարիտտա Կալմուխյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 4
«27» հունվարի 2022թ.
N 2-7 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	**230 945.0**	**46 189.0**	**57 736.3**	**57 736.3**	**69 283.4**
2	տնտեսական և այլ ծախսեր	**25 885.3**	**5 177.1**	**6 471.3**	**6 471.3**	**7 765.6**
ԸՆԴԱՄԵՆԸ		**256 830.3**	**51 366.1**	**64 207.6**	**64 207.6**	**77 049.0**

Կազմակերպության
Տնօրեն՝ _____ (Խաչատուր Մելիքսեթյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Մարգարիտտա Կալմուխյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.